Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Օգոստոս

թիվ 8 (168)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Իդրամ ՍՊԸ-ի «էրեբունի ՎԾ մասնաճյուղը հաշվառելու, «Դելտա-Ֆրագմենտ ՍՊԸ-ի արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ-ին «էքսպրես Մանի արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև մի շարք բաց և փակ բաժնետիրական ընկերությունների մասնաճյուղեր գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 197-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 201-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 326-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 212-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

29 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 214-Ն որոշումը «2011-2012 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական վանքերը և եկեղեցիները հուշադրամների շարքից «Սուրբ Էջմիածնի Մայր տաճար, «Գնդեվանք և «Նորավանք արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 8 պաշտոնական պարզաբանումը «Բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման մասին

35 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 206Ա):
- ***Հաշվառվել է*** «Իդրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «էրեբունի ՎԾ» մասնաճյուղը (որոշում թիվ 210Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Դելտա-Ֆրագմենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 221Ա):
- ***«Էքսպրես Մանի» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 219Ա):
- ***Գրանցվել են*** «ՊրոԿրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Աջափնյակ» (որոշում թիվ 1/835Ա), «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Աբովյան», «Արաբկիր», «Իջևան», «Մալաթիա-Սեբաստիա», «Շենգավիթ» (որոշում թիվ 1/838Ա), «Մարտունի», «Քանաքեռ-Զեյթուն», «Վանաձոր», «Գյումրի» (որոշում թիվ 1/857Ա) և «Զարգացման հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերության «Արմավիր» (որոշում թիվ 1/860Ա) մասնաճյուղերը:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 3 սահմանափակ պատասխանատվությամբ, 1 փակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝4750000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/831Ա, 1/846Ա, 1/866Ա, 1/855Ա) և 8 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/800Ա, 1/801Ա, 1/810Ա-1/812Ա, 1/847Ա, 1/851Ա, 1/852Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Ղեկավարվելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը և գործարքում իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» թիվ 269-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգը լրացնել 10.1, 10.2 և 10.3 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.1. Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարը (աշխատակիցը) պետք է ունենա բարձրագույն կրթություն կամ Հայաստանի Հանրապետության կամ միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական և նշանակմանը նախորդող 10 տարիների ընթացքում առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ (ֆինանսական ոլորտում կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում):

10.2. Ներքին դիտարկումների մարմնի ղեկավար (աշխատակից) չեն կարող լինել այն անձինք, ովքեր՝

1) ունեն դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործության համար,

2) դատարանի կողմից զրկված են ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

3) սնանկ են ճանաչվել և ունեն չմարված (չներված) պարտավորություններ,

4) քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,

5) չեն համապատասխանում սույն կանոնակարգի 10.1-րդ կետով սահմանված չափանիշներին:

10.3. Սույն կանոնակարգի 10.1 և 10.2 կետերով նախատեսված տեղեկությունները հավաստվում են «Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի (աշխատակցի) վերաբերյալ» հայտարարագրով (այսուհետ՝ Հայտարարագիր)՝ համաձայն Հավելված 1.1-ի, որը ֆինանսական հաստատությանն է ներկայացվում ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի (աշխատակցի) պաշտոնում նշանակվելուց առաջ: Հայտարարագիր ներկայացնելու պահանջը չի տարածվում բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի (աշխատակցի) վրա:»:

2. Հաստատել Հավելված 1.1-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 հուլիսի 2012 թ., N 197-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հուլիսի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.08.2012 թ. (ՀՀՊՏ N22 (435), 22.08.2012):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի հուլիսի 24-ի թիվ 197-Ն որոշմամբ

Հավելված 1.1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշման Հավելված 1-ի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի (աշխատակցի) վերաբերյալ

1. Անձնական տվյալներ

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
(օր/ամիս/տարի)

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի համարը և սերիան, ում կողմից և երբ է տրված _____
Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում) _____

1.7. Բնակության վայրը _____

1.8. Հեռախոսահամարը _____ 1.9. էլեկտրոնային փոստի հասցեն _____

1.10. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը, ինչպես նաև նախկինում Ձեր ունեցած մյուս անձնագրերի սերիան և համարը

Անունը, ազգանունը, հայրանունը _____

Կրելու ժամանակաշրջանը _____ Անձնագրի սերիան և համարը _____
(օր/ամիս/տարի)

2. Պաշտոնը

2.1. Եթե ֆինանսական հաստատությունում զբաղեցնում եք այլ պաշտոն, ապա նշեք այդ պաշտոնի անվանումը _____

3. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի 10^{1} և 10^{2} կետերով նշված հիմքերի մասին.
Մեկնաբանությունների համար կարող եք օգտագործել լրացուցիչ թերթեր

3.1. Արդյո՞ք Դուք կատարել եք դիտավորյալ հանցագործություն, որի համար դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ — Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

3.2. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից — Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

3.3. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ և ունեք չմարված (չներված) պարտավորություններ — Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

3.4. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ

Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները

3.5. Կրթություն

Այս կետը լրացնելու փոխարեն դեկավարը (աշխատակիցը) կարող է ներկայացնել իր ինքնակենսագրությունը (տպագիր և հայերեն), որտեղ նվազագույնս պետք է ներկայացվի սույն կետով սահմանված տեղեկատվությունը

3.5.1. Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Հաճախումների ժամանակաշրջանը (_____ թ-ից մինչև _____թ.)	Գիտական աստիճանը

3.6. Աշխատանքային գործունեությունը վերջին 10 տարվա ընթացքում

Կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը

3.7. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

4. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:*

Ես համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 326-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել ԱՊՊԱ վկայագրերի կնքման գործընթացի արդյունավետությունը, լուծել ձեռագիր եղանակով լրացվող ԱՊՊԱ վկայագրերի հետ կապված գործնականում ի հայտ եկած մի շարք խնդիրները, ինչպես նաև բարելավել կնքված ԱՊՊԱ վկայագրերի վերաբերյալ ամբողջական տվյալների՝ առավելագույնս ճշգրիտ և սեղմ ժամկետներում, ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ մուտքագրման գործընթացը,

հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 326-Ն որոշմամբ հաստատված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները ու լրացումները.

1) Ուժը կորցրած ճանաչել Կարգի 26-րդ կետը:
2) Կարգի 30-րդ կետը «տվյալներին» բառից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ սույն կարգի 31.1-րդ կետով սահմանված հարցման արդյունքում ստացված տեղեկատվությունում առկա է անհամապատասխանություն ապահովադրի կամ նրա լիազորված անձի կողմից ներկայացված փաստաթղթերում արտացոլված տվյալների հետ» բառերով:
3) Կարգը 31-րդ կետից հետո լրացնել 31.1, 31.2, 31.3, 31.4 և 31.5 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«31.1. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ պայմանագիր կնքելուց առաջ, ինչպես նաև սույն հավելվածի 28-րդ կետով նախատեսված այլ դեպքերում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ ներկայացնելուց առաջ՝ նախքան ԱՊՊԱ վկայագրի և սույն հավելվածի Հավելված 1-ով սահմանված ՏՄ-ներին և դրանց սեփականատերերին վերաբերող համապատասխան դաշտերը լրացնելը, սույն հավելվածով սահմանված կարգով հարցում են կատարում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ՝ համապատասխան ՏՄ-ի և դրա սեփականատիրոջ վերաբերյալ սույն հավելվածի Հավելված 2-ի Չև 8-ով սահմանված տեղեկատվությունը ստանալու համար: Ընդ որում, սույն կետով սահմանված հարցման կատարման և համապատասխանաբար ԱՊՊԱ պայմանագրի կնքման կամ սույն հավելվածի 28-րդ կետով նախատեսված այլ դեպքերում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալների ներկայացման միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ օրացուցային օրը:

31.2. Սույն հավելվածի 31.1-րդ կետով սահմանված պահանջը չի տարածվում այն ԱՊՊԱ պայմանագրերի կնքման վրա, որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսված «ժամանակավոր ներմուծում» կամ «տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմներով, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների առևտրով զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից վաճառքի համար Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող ՏՄ-ներին:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հուլիսի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 9.08.2012 թ. (ՀՀԳՏ N22 (435), 22.08.2012):

31.3. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները սույն հավելվածի 31.1-րդ կետի համաձայն կատարված հարցման արդյունքում ստացված տվյալները համեմատում են ՏՄ-ի հաշվառման վկայագրի, ինչպես նաև սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթղթերում արտացոլված տվյալների հետ:

31.4. Սույն հավելվածի 31.3-րդ կետով նախատեսված համեմատության արդյունքում տվյալների անհամապատասխանություն չհայտնաբերվելու դեպքում սույն հավելվածով սահմանված ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների համապատասխան դաշտերը լրացվում են ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված տվյալների հիման վրա:

31.5. Սույն հավելվածի 31.3-րդ կետով նախատեսված համեմատության արդյունքում տվյալների անհամապատասխանություն հայտնաբերվելու, ինչպես նաև սույն հավելվածով սահմանված հարցման արդյունքում որևէ տվյալ չստացվելու դեպքում սույն հավելվածով սահմանված ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների համապատասխան դաշտերը լրացվում են ապահովադրի կամ նրա լիազորված անձի ներկայացրած փաստաթղթերում արտացոլված տվյալների հիման վրա:»:

4) Կարգի 42-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«42. Մինչև 2013 թվականի փետրվարի 1-ը ԱՊՊԱ պայմանագրերի վերաբերյալ ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ են ներկայացնում ոչ ուշ, քան պայմանագրի կնքման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ավարտը: 2013 թվականի փետրվարի 1-ից ԱՊՊԱ պայմանագրերի վերաբերյալ ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ են ներկայացնում անմիջապես պայմանագրի կնքման պահին:»:

5) Կարգի 43-րդ կետում «կնքված» բառը փոխարինել «գործողության ավարտ ունեցող» բառերով:

6) Կարգի 44-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«44. ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ արդեն իսկ ներկայացված տվյալների յուրաքանչյուր փոփոխության դեպքում (ներառյալ պայմանագրի լուծման դեպքերը) ապահովագրական ընկերությունն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ է ներկայացնում ոչ ուշ, քան տվյալ փոփոխությունը կատարելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ավարտը:»:

7) Կարգի 45-րդ, 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերում «երեք» բառը փոխարինել «մեկ» բառով:

8) Կարգի 50-րդ կետը «ղեկավարի» բառից հետո լրացնել «կամ նրան փոխարինող անձի» բառերով:

9) Կարգի 52-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«52. Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունն ապահովադրի մասին ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տեղեկատվություն ստանալու համար հարցում կատարելու դեպքում հարցում կատարելու պահից սկսած առնվազն հինգ տարվա ընթացքում պահպանում է այդ ապահովադիրների վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսացել հարցման համար»:

10) Կարգը 53-րդ կետից հետո լրացնել 53.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«53.1. Սույն հավելվածի 31.3-րդ կետով սահմանված հարցման համեմատության արդյունքում անհամապատասխանություններ չհայտնաբերվելու դեպքում ՏՄ-ի և դրա սեփականատիրոջ վերաբերյալ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ է ներկայացվում միայն հարցման ժամանակ օգտագործված հաշվառման համարանիշը:»:

11) Կարգի 54-րդ կետի «համադրմամբ» բառից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից տվյալները ստացվել են սույն հավելվածի 31.1-րդ կետով սահմանված հարցման արդյունքում» բառերը:

12) Կարգը 54-րդ կետից հետո լրացնել 54.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«54.1. Սույն հավելվածի 31.3-րդ կետով սահմանված հարցման համեմատության արդյունքում անհամապատասխանություն հայտնաբերվելու, ինչպես նաև սույն հավելվածով սահմանված կարգով հարցման արդյունքում որևէ տվյալ չստացվելու դեպքում ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ՏՄ-ի և դրա սեփականատիրոջ վերաբերյալ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ են ներկայացնում սույն հավելվածի 31.5-րդ կետով սահմանված տվյալները, ընդ որում, ներկայացնելով միայն այն տվյալները, որոնց մասով առկա է անհամապատասխանություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 հուլիսի 2012 թ., N 201-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ և 96-րդ հոդվածի 2-րդ մասերը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասը, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ, 70-րդ և 83-րդ հոդվածները, 182-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 4-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը և ղեկավարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետև՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել 25-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«25) «Ֆինանսական օգնական» համակարգ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ինչպես նաև վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող սպառողական և հիփոթեքային վարկերի, ավանդների (բացառությամբ ընթացիկ հաշիվների) և վճարային քարտերի պայմանների վերաբերյալ տեղեկատվության որոնման և համեմատման էլեկտրոնային համակարգ:»:

2) Կանոնակարգի 4-րդ կետի 1-ին ենթակետը «արժանահավատ» բառից հետո լրացնել «, ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ ինտերնետի, մամուլի, գովազդի, տեղեկատվական ամփոփագրերի, Ֆինանսական օգնական համակարգի և այլ միջոցներով հրապարակվող կամ գործունեության վայրում բացահայտվող տեղեկատվությունը չպետք է տարբեր լինի ընկերության կողմից ծառայությունների մատուցման իրական պայմաններից» բառերով:

3) Կանոնակարգի 24-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Սպառողական վարկերի, հիփոթեքային վարկերի, ավանդների, վճարային քարտերի մասին տեղեկություն պարունակող էջերում հղում է կատարվում «Ֆինանսներ բոլորի համար»՝ www.abcfinance.am ինտերնետային կայքի «Ֆինանսական օգնական» համակարգին:»:

4) Կանոնակարգը լրացնել գլուխ 4.1-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 4.1. «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

30.4. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը, ինչպես նաև վարկային կազմակերպությունները սպառողական վարկերի, հիփոթեքային վարկերի, ավանդների և վճարային քարտերի գծով իրենց կողմից մատուցվող ծառայու-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. օգոստոսի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.08.2012 թ. (ՀՀՊՏ N23 (436)[1], 3.09.2012):

թյունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակում են նաև «Ֆինանսական օգնական» համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով: Համակարգում տվյալները լրացվում են սույն կանոնակարգի Հավելված 14-ով սահմանված կարգով:

30.5. Համակարգն օգտագործելու և Համակարգում տվյալներ լրացնելու նպատակով ընկերություններն օգտվում են Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքանունից և ծածկագրից: Ընդ որում՝ մուտքանուն և ծածկագիր ստանալու համար ընկերությունը նախապես Կենտրոնական բանկ է ներկայացնում գործող էլեկտրոնային հասցե(ներ)՝ Հավելված 14-ով սահմանված կարգով:

30.6. Համակարգում ծառայությունների վերաբերյալ տվյալների թարմացումը կատարվում է ըստ անհրաժեշտության՝ մուտքագրված որևէ պայմանի փոփոխության, նոր պայմանի ավելացման կամ պակասեցման դեպքում: Ընդ որում՝ փոփոխված պայմանները համակարգ են մուտքագրվում ոչ ուշ, քան տվյալ պայմանի ուժի մեջ մտնելու օրը:

30.7. Եթե ընկերությունը ցանկանում է Համակարգում ավելացնել դրանում չնախատեսված որևէ նոր պայման (տվյալ), ապա վերջինիս ուժի մեջ մտնելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ ընկերությունն այդ մասին հաղորդագրություն է ուղարկում Կենտրոնական բանկ՝ տեղեկացնելով նոր պայմանի կամ տվյալի բովանդակության մասին: Կենտրոնական բանկն ապահովում է տվյալ պայմանի ավելացման տեխնիկական հնարավորությունը և այդ մասին տեղյակ պահում ընկերությանը՝ ուղարկելով պատասխան հաղորդագրություն:»:

5) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 14-ով՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հոկտեմբերի 1-ին: Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը և վարկային կազմակերպությունները գրանցվում են Համակարգում և լրացնում անհրաժեշտ տվյալները սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1 ամսվա ընթացքում, իսկ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լիցենզիա ստացող բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը և վարկային կազմակերպությունները՝ համապատասխան լիցենզիան ստանալուց հետո 1 ամսվա ընթացքում: Համակարգը գործարկվում է 2013 թվականի փետրվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
9 օգոստոսի 2012 թ., N 212-Ն

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի օգոստոսի 7-ի թիվ 212-Ն որոշման

Հավելված 14
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

ՈՒՂԵՑՈՒՅՑ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. «Ֆինանսական օգնական» համակարգում (այսուհետ՝ Համակարգ) գրանցվելու և Համակարգ մուտք գործելու մուտքանուն և ծածկագիր ստանալու համար Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և օտարերկրյա բանկի մասնաճյուղերը, ինչպես նաև վարկային կազմակերպությունները (այսուհետ՝ ընկերություն) Կենտրոնական բանկ են ներկայացնում էլեկտրոնային փոստի երկու հասցեներ՝ համակարգից օգտվելու իրավասություն ունեցող երկու աշխատակիցների համար, մեկը՝ խմբագիր, մյուսը՝ ադմինիստրատոր, ինչպես նաև այդ աշխատակիցների տվյալները՝ անուն, ազգանուն,

կապի միջոցներ: Սույն կետում նշված տվյալների փոփոխության դեպքում ընկերությունները նոր տվյալները ներկայացնում են Կենտրոնական բանկ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

2. Համակարգ առաջին անգամ մուտք գործելու համար ընկերությունները մուտքագրում են Կենտրոնական բանկի կողմից իրենց տրամադրված մուտքանունը և ծածկագիրը: Ընդ որում, առաջին անգամ համակարգ մուտք գործելիս տրամադրված ծածկագիրը պետք է փոխվի ընկերությունների կողմից՝ ապահովելով դրանց կիրառումը հետագա մուտքերի և համակարգում տվյալների լրացման համար:

3. Համակարգում տվյալների լրացումն իրականացվում է երկու տարբերակով՝ տվյալների ուղղակի մուտքագրում (Տարբերակ 1) և «էքս էմ էլ» ձևաչափի ֆայլի ներբեռնում (Տարբերակ 2): Բոլոր տվյալները լրացվում են «Յունիկոդ» տառատեսակով:

4. Համակարգում տվյալների ուղղակի մուտքագրման դեպքում (Տարբերակ 1) ընկերության խմբագիրը՝

1) մուտք է գործում Համակարգ,
2) ծառայությունների ցանկից ընտրում է համապատասխան ծառայության տեսակը,
3) մուտքագրում է անհրաժեշտ տվյալները,
4) այնուհետև պահպանում դրանք՝ սեղմելով «Ավելացնել» կոճակը:

5. Սույն ուղեցույցի 4-րդ կետով նախատեսված գործողությունն իրականացվում է յուրաքանչյուր անգամ ծառայության նոր տեսակ ավելացնելիս: Ընդ որում, եթե միևնույն ծառայությունը տրամադրվում է մեկից ավելի պայմաններով, ապա յուրաքանչյուր պայմանի համար այն լրացվում է որպես նոր ծառայություն (տարբեր արժույթներով տրամադրվող հիփոթեքային վարկեր կամ ներգրավվող ավանդներ և այլն):

6. «էքս էմ էլ» ձևաչափի ֆայլի ներբեռնման դեպքում (Տարբերակ 2) խմբագիրը՝

1) մուտք է գործում համակարգ,
2) ծառայությունների առկա ցուցակից ընտրում է համապատասխան ծառայության տեսակը,
3) «Կցել» (browse) կոճակի միջոցով ներբեռնում է համապատասխան ֆայլը,
4) այնուհետև սեղմում «Ավելացնել» կոճակը:

7. Համակարգում տվյալների մուտքագրումից հետո դրանք ենթակա են ստուգման խմբագրի կողմից: Մուտքագրված տվյալները ստուգելու համար խմբագիրը՝

1) սեղմում է «Ստուգել» կոճակը,
2) բացվող նոր էջում մուտքագրում է պահանջվող տվյալները,
3) սեղմում է «Որոնել» կոճակը,
4) և համեմատում որոնման արդյունքներն ու իր կողմից մուտքագրված տվյալները,

8. Տվյալները մուտքագրելուց հետո խմբագիրը սեղմում է «Ուղարկել» կոճակը՝ մուտքագրված տվյալները հաստատելու և ադմինիստրատորին ուղարկելու նպատակով: Մուտքագրված տվյալներն ադմինիստրատորին ուղարկելիս խմբագիրը կարող է նաև կից հաղորդագրություն ուղարկել: Ընկերության համաձայնությամբ՝ խմբագրին կարող է հնարավորություն տրվել առանց ադմինիստրատորին ուղարկելու անմիջապես հաստատել իր կողմից մուտքագրված տվյալները՝ «Ուղարկել» կոճակի փոխարեն «Առցանց» կոճակը սեղմելով:

9. Արդեն մուտքագրված ծառայության տեսակում փոփոխություն կատարելու համար խմբագիրը՝

1) մուտք է գործում համակարգ,
2) ծառայությունների ցանկից ընտրում է համապատասխան ծառայության տեսակը,
3) առկա լրացված ծառայությունների աղյուսակում սեղմում է համապատասխան ծառայության «Փոփոխել» (ձեռքի նշան) կոճակը,
4) բացվող նոր էջում կատարում է համապատասխան փոփոխությունները,
5) և պահպանում է դրանք՝ սեղմելով «Պահպանել» կոճակը,
6) փոփոխված տվյալները կրկին ուղարկվում են ադմինիստրատորին վերջնական հաստատման համար կամ միանգամից հաստատվում են խմբագրի կողմից՝ սույն ուղեցույցի 8-րդ կետի համաձայն:

10. Ադմինիստրատորը խմբագրի կողմից մուտքագրված տվյալներին ծանոթանալու համար՝

1) մուտք է գործում համակարգ,
2) ծառայությունների առկա ցուցակից ընտրում է համապատասխան ծառայության տեսակը՝ սեղմելով «Դիտարկել» կոճակը:

11. Տվյալները ստուգելու համար ադմինիստրատորը՝

1) սեղմում է «Ստուգել» կոճակը,
2) բացվող նոր էջում մուտքագրում է պահանջվող տվյալները,
3) սեղմում է «Որոնել» կոճակը և համեմատում որոնման արդյունքներն ու իր կողմից մուտքագրված տվյալները,
4) անհրաժեշտության դեպքում ադմինիստրատորը կարող է տվյալներն ուղարկել վերանայման՝ սեղմելով «Մերժել» կոճակը, ընդ որում, ադմինիստրատորը կարող է նաև կից հաղորդագրություն ուղարկել:

12. Տվյալներին ծանոթանալուց և դրանք ստուգելուց հետո ադմինիստրատորը սեղմում է «Հաստատել» կոճակը՝ դրանք վերջնական հաստատելու համար:

13. Յուրաքանչյուր անգամ խմբագրի կողմից ծառայության նոր տեսակ լրացնելիս կամ արդեն լրացված ծառայության տեսակում փոփոխություն կատարելիս և դրանք Ադմինիստրատորին ուղարկելիս, ինչպես նաև Ադմինիստրատորի կողմից ծառայությունը հաստատելիս կամ ծառայության հաստատումը մերժելիս, սույն ուղեցույցի 1-ին կետով սահմանված էլեկտրոնային հասցեներին համապատասխան բովանդակությամբ հաղորդագրություն է ուղարկվում:

ԳԼՈՒԽ 2.
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ԸՍՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

14. Հիփոթեքային վարկեր

	Դաշտեր	Լրացման կանոններ
1	Վարկի անվանումը (տեսանելի չէ սպառողների համար)	Ինքնուրույն մուտքագրվում է ընկերության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Վարկի նպատակը	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
3	Վարկի գումար	Լրացվում են Վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 3000000 Մինչև 30000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
4	Վարկի արժույթը	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
5	Կանխավճար	Լրացվում են կանխավճարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 40% Մինչև 80% Կանխավճարի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
6	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետները ամիսներով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 12 Մինչև 120 Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
7	Մարումների ձև	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
8	Վարկի տրամադրման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
9	Վարկի տոկոսադրույքի տեսակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
10	Վարկի անվանական տոկոսադրույք	Լրացվում է վարկի տոկոսադրույքը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ ֆիքսված տոկոսադրույքի դեպքում 15 փոփոխվողի դեպքում 10+5

		Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում, սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով՝ նման չափանիշների առկայության դեպքում *(օրինակ՝ 150000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):*
11	Վարկային հայտի ուսումնասիրության վճար (միանվագ)	Այս վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով, իսկ առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5% Նվազագույնը 10000 Առավելագույնը 40000 Ընդ որում՝ վարկի տրամադրման ժամանակ միանվագ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկային հայտի ուսումնասիրության վճար»:
12	Վարկի սպասարկման վճար (տարեկան)	Այս վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս. ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 2 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Օրինակ՝ 5% և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Ընդ որում՝ տարեկան պարբերականությամբ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկի սպասարկման վճար»: Եթե վարկի սպասարկման վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա կտրվածքով գանձման ենթակա վճարների չափը:
13	1) Գրավի գնահատման վճար 2) Նոտարական վավերացման վճար 3) Կադաստրի հետ կապված վճար	Այս վճարները կարող են լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5% Միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի միջնորդավճարի առավել ցածր արժեք նման չափանիշների առկայության դեպքում:
14	Անշարժ գույքի ապահովագրության վճար (տարեկան)	Այս վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս. ա. վարկի մայր գումարի, բ. վարկի մնացորդի, գ. վարկի մնացորդ + տոկոսագումարների կամ դ. գույքի արժեքի նկատմամբ՝

		թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Օրինակ՝ Տոկոս վարկի գումարի նկատմամբ 5% և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն Ապահովագրության վճարի գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի ապահովագրության վճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում: Եթե ապահովագրության վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա ընթացքում գանձման ենթակա վճարների չափը:
15	Վարկառուի դժբախտ պատահարներից ապահովագրության վճար (տարեկան)	Վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս. ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 2 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Օրինակ՝ 5% և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն Ապահովագրության վճարի գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի ապահովագրության վճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում: Եթե ապահովագրության վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա ընթացքում գանձման ենթակա վճարների չափը:
16	Վարկ/գրավ հարաբերակցություն	Լրացվում է Վարկ/գրավ նվազագույն հարաբերակցությունը թվերի մուտքագրման միջոցով: Օրինակ՝ 70
17	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը ՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ**:** Օրինակ՝ Անվանում Վճար 1 Պարբերականություն միանվագ Գումար 1000 Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:
18	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է. 1. տեղեկատվություն սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ՝ առկայության դեպքում (սահմանված է սույն կետի 10-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 17-րդ դաշտերում), 2. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

15. Սպառողական վարկեր

1) Ավտովարկ

	Տվյալներ	Լրացման կանոններ
1	Վարկի անվանումը (տեսանելի չէ սպառողների համար)	Մուտքագրվում է ընկերության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ ավտովարկ
2	Ավտոմեքենա	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
3	Վարկի գումար	Լրացվում են Վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 50000 Մինչև 5000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0» (զրո), իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
4	Կանխավճար	Լրացվում են կանխավճարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 40% Մինչև 80% Կանխավճարի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
5	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետները ամիսներով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 12 Մինչև 120 Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
6	Մարումների ձև	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
7	Վարկի տրամադրման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
8	Վարկի տոկոսադրույքի տեսակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
9	Վարկի անվանական տոկոսադրույք	Լրացվում է վարկի տոկոսադրույքը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Ֆիքսված տոկոսադրույքի դեպքում 15 փոփոխվողի դեպքում 10+5 Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով՝ նման չափանիշների առկայության դեպքում *(օրինակ՝ 150 000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):*
10	Վարկային հայտի ուսումնասիրության վճար (միանվագ)	Տվյալ վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանաչափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով, իսկ առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների):

		Օրինակ՝ 5% Նվազագույնը 10000 Առավելագույնը 40000 Ընդ որում՝ վարկի տրամադրման ժամանակ միանվագ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկային հայտի ուսումնասիրության վճար»:
11	Վարկի սպասարկման վճար (տարեկան)	Վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս. ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 2 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Օրինակ՝ 5% և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Տարեկան պարբերականությամբ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկի սպասարկման վճար»: Եթե վարկի սպասարկման վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա կտրվածքով գանձման ենթակա վճարների չափը:
12	1) Գրավի գնահատման վճար 2) Նոտարական վավերացման վճար	Այս վճարները կարող են լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5% Միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի միջնորդավճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:
13	Գրավի ապահովագրության վճար (տարեկան)	Այս վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս. ա. վարկի մայր գումարի, բ. վարկի մնացորդի, գ. վարկի մնացորդ + տոկոսագումարների կամ դ. գույքի արժեքի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Օրինակ՝ 5% և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Ապահովագրության վճարի գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի ապահովագրության վճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում: Եթե ապահովագրության վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա ընթացքում գանձման ենթակա վճարների հանրագումարը:

14	Վաճառքի սրահներ	Լրացվում են Վաճառքի սրահների անվանումներն ու հասցեները՝ «Կցել» կոճակի միջոցով բեռնելով «էքս էմ էլ» ձևաչափի ֆայլը (անհրաժեշտ «էքս էմ էլ» ձևաչափի ֆայլի ներկայացուցչական օրինակին հնարավոր է ծանոթանալ «Բեռնել» կոճակի միջոցով ներբեռնելով համապատասխան փաստաթուղթը):
15	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ**:** Օրինակ՝ Անվանում [Վճար 1] Պարբերականություն [միանվագ] Գումար [1000] Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք նման չափանիշների առկայության դեպքում:
16	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է. 1. տեղեկատվություն սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ առկայության դեպքում (սահմանված է սույն ենթակետի 9-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ դաշտերում), 2. տեղեկատվություն ձեռքբերվող ավտոմեքենային ներկայացվող պահանջների վերաբերյալ *(օրինակ՝ վարկավորվում է առավելագույնը 5 տարվա արտադրության արտասահմանյան մեքենաների ձեռքբերումը),* 3. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

2) Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկեր

	Տվյալներ	**Լրացման կանոններ**
1	Վարկի անվանումը (տեսանելի չէ սպառողների համար)	Մուտքագրվում է ընկերության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ [աբգ]
2	Գրավի տեսակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
3	Ոսկյա իրերի հարգ	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
4	Վարկի գումար	Լրացվում են Վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած [50000] Մինչև [5000000] Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0» (զրո), իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
5	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետները ամիսներով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած [12] Մինչև [120] Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0» (զրո), իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
6	Մարումների ձև	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
7	Վարկի տրամադրման եղանակը	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:

8	Վարկի անվանական տոկոսադրույք	Լրացվում վարկի տոկոսադրույքը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ ֆիքսված տոկոսադրույքի դեպքում 15 փոփոխվողի դեպքում 10+5 Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով նման չափանիշների առկայության դեպքում *(օրինակ՝ 150000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):*
9	Վարկ/գրավ հարաբերակցություն	Լրացվում է վարկ/գրավ նվազագույն հարաբերակցությունը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների և այլ սիմվոլների): Օրինակ՝ 90
10	Վարկային հայտի ուսումնասիրության վճար (միանվագ)	Տվյալ վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանաչափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով, իսկ առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5% Նվազագույնը 10000 Առավելագույնը 40000 Ընդ որում՝ վարկի տրամադրման ժամանակ միանվագ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկային հայտի ուսումնասիրության վճար»:
11	Վարկի սպասարկման վճար (ամսական)	Վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 3% Ամսական պարբերականությամբ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկի սպասարկման վճար»: Եթե վարկի սպասարկման վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 ամսվա կտրվածքով գանձման ենթակա վճարի չափը:
12	Գրավի գնահատման վճար	Վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս. ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 2 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով: Օրինակ՝ 5% և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի միջնորդավճարի առավել ցածր արժեք նման չափանիշների առկայության դեպքում:

13	Գրավի պահպանման վճար	Լրացվում է որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների և այլ սիմվոլների): Օրինակ՝ 500
14	Ոսկու կամ թանկարժեք քարերի գնահատման արժեքներ	Լրացվում են ընդունվող ոսկյա իրերի հարգերն ու դրանց գնահատման արժեքները՝ «Կցել» կոճակի միջոցով բեռնելով «էքս էմ էլ» ձևաչափի ֆայլը (անհրաժեշտ էքս էմ էլ ձևաչափի ֆայլի ներկայացուցչական օրինակին հնարավոր է ծանոթանալ «Բեռնել» կոճակի միջոցով ներբեռնելով համապատասխան փաստաթուղթը)
15	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ: Օրինակ՝ Անվանում Վճար 1 Պարբերականություն միանվագ Գումար 1000 Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք նման չափանիշների առկայության դեպքում:
16	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է. 1. տեղեկատվություն սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ՝ առկայության դեպքում (սահմանված է 8-րդ, 12-րդ և 15-րդ դաշտերում), 2. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

3) Ապառիկ առևտրի վարկավորում

	Տվյալներ	**Լրացման կանոններ**
1	Վարկի անվանումը (տեսանելի չէ սպառողների համար)	Մուտքագրվում է ընկերության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Չեռքբերվող ապրանք	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
3	Վարկի գումար	Լրացվում են Վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 50000 Մինչև 5000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
4	Կանխավճար	Լրացվում են կանխավճարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 40% Մինչև 80% Կանխավճարի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
5	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետներն ամիսներով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 12 Մինչև 120 Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:

6	Մարումների ձև	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
7	Վարկի անվանական տոկոսադրույք	Լրացվում է վարկի տոկոսադրույքը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ ֆիքսված տոկոսադրույքի դեպքում 15 փոփոխվողի դեպքում 10+ 5 Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով նման չափանիշների առկայության դեպքում *(օրինակ՝ 150000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):*
8	Վարկային հայտի ուսումնասիրության վճար (միանվագ)	Տվյալ վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով, իսկ առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների). Օրինակ՝ 5% Նվազագույնը 10000 Առավելագույնը 40000 Ընդ որում՝ վարկի տրամադրման ժամանակ միանվագ գանձվող ցանկացած վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկային հայտի ուսումնասիրության վճար»:
9	Վարկի սպասարկման վճար (ամսական)	Վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների). Օրինակ՝ 3% Ամսական պարբերականությամբ գանձվող ցանկացած վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկի սպասարկման վճար»: Եթե վարկի սպասարկման վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 ամսվա կտրվածքով գանձման ենթակա վճարի չափը:
10	Վաճառքի սրահներ	Լրացվում են Վաճառքի սրահների անվանումներն ու հասցեները՝ «Կցել» կոճակի միջոցով բեռնելով «էքս էմ էլ» ձևաչափի ֆայլը (անհրաժեշտ «էքս էմ էլ» ձևաչափի ֆայլի ներկայացուցչական օրինակին հնարավոր է ծանոթանալ «Բեռնել» կոճակի միջոցով ներբեռնելով համապատասխան փաստաթուղթը):
11	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ: Օրինակ՝ Անվանում Վճար 1 Պարբերականություն միանվագ Գումար 1000 Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք նման չափանիշների առկայության դեպքում:

12	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է. 1. տեղեկատվություն սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ՝ առկայության դեպքում (սահմանված է 7-րդ, 11-րդ դաշտերում), 2. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

4) Ուսանողական վարկեր

	Տվյալներ	**Լրացման կանոններ**
1	Վարկի անվանումը (տեսանելի չէ սպառողների համար)	Մուտքագրվում է ընկերության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Վարկի գումար	Լրացվում են վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 50000 Մինչև 5000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0» (զրո), իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
3	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետներն ամիսներով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 12 Մինչև 120 Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0» (զրո), իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
4	Գրավի տեսակ	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
5	Մարումների ձև	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
6	Վարկի անվանական տոկոսադրույք	Լրացվում է վարկի տոկոսադրույքը թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ ֆիքսված տոկոսադրույքի դեպքում 15 փոփոխվողի դեպքում 10+ 5 Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով նման չափանիշների առկայության դեպքում *(օրինակ՝ 150000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):*
7	Վարկ/գրավ հարաբերակցություն	Լրացվում է թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների և այլ սիմվոլների): Օրինակ՝ 90
8	Վարկային հայտի ուսումնասիրության վճար (միանվագ)	Տվյալ վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանաչափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով, իսկ առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների).

		Օրինակ՝ 5% Նվազագույնը 10000 Առավելագույնը 40000 Ընդ որում՝ վարկի տրամադրման ժամանակ միանվագ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկային հայտի ուսումնասիրության վճար»:
9	Վարկի սպասարկման վճար (ամսական)	Վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների). Օրինակ՝ 3% Ամսական պարբերականությամբ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկի սպասարկման վճար»: Եթե վարկի սպասարկման վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 ամսվա կտրվածքով գանձման ենթակա վճարի չափը:
10	1) Գրավի գնահատման վճար 2) Նոտարական վավերացման վճար	Այս վճարները կարող են լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների):. Օրինակ՝ 5% Միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի միջնորդավճարի առավել ցածր արժեք նման չափանիշների առկայության դեպքում:
11	Գրավի ապահովագրության վճար (տարեկան)	Այս վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս. ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով. Օրինակ՝ 5% Տոկոս վարկի գումարի նկատմամբ և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Ապահովագրության վճարի գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի ապահովագրության վճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում: Եթե ապահովագրության վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա ընթացքում գանձման ենթակա վճարների հանրագումարը:
12	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ: Օրինակ՝ Անվանում Վճար 1 Պարբերականություն միանվագ Գումար 1000

		Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:
13	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է. 1. տեղեկատվություն սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ (սահմանված է սույն ենթակետի 6-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դաշտերում), 2. ինչպես նաև տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

5. Այլ սպառողական վարկեր

	Տվյալներ	**Լրացման կանոններ**
1	Վարկի անվանումը (տեսանելի չէ սպառողների համար)	Մուտքագրվում է ընկերության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ աբգ
2	Վարկի գումար	Լրացվում են վարկի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 50000 Մինչև 5000000 Վարկի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
3	Վարկի ժամկետ	Լրացվում են վարկի առավելագույն և նվազագույն ժամկետներն ամիսներով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած 12 Մինչև 120 Վարկի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
4	Գրավի տեսակ	Ընտրվում է առաջարկվող տարբերակներից որևէ մեկը կամ մի քանիսը միաժամանակ («Multiple choice» սկզբունքով):
5	Մարումների ձև	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
6	Վարկի տրամադրման եղանակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
7	Վարկի անվանական տոկոսադրույք	Լրացվում է վարկի տոկոսադրույքը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ ֆիքսված տոկոսադրույքի դեպքում՝ 15 փոփոխվողի դեպքում՝ 10+ 5 Տվյալ վարկատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի ցածր տոկոսադրույքով նման չափանիշների առկայության դեպքում *(օրինակ՝ 150 000 դրամ և ավելի աշխատավարձի առկայության և ժամկետանց վարկերի բացակայության դեպքում վարկի տոկոսադրույքը կսահմանվի 17 տոկոս):*
8	Վարկ/գրավ հարաբերակցություն	Լրացվում է թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների և այլ սիմվոլների): Օրինակ՝ 40

9	Վարկային հայտի ուսումնասիրության վճար (միանվագ)	Տվյալ վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 10000 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ վճարի առավելագույն և նվազագույն սահմանափակումների մուտքագրման հնարավորությամբ: Վճարի չափը լրացվում է թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով, իսկ առավելագույն և նվազագույն արժեքների առկայության դեպքում վերջիններս լրացվում են միայն թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների). Օրինակ՝ 5% Նվազագույնը 10000 Առավելագույնը 40000 Ընդ որում՝ վարկի տրամադրման ժամանակ միանվագ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկային հայտի ուսումնասիրության վճար»:
10	Վարկի սպասարկման վճար (ամսական)	Վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների). Օրինակ՝ 3% Ամսական պարբերականությամբ գանձվող ցանկացած նմանատիպ վճար, բացառությամբ գրավի ձևակերպման, գնահատման և ապահովագրության վճարների, անկախ անվանումից, լրացվում է որպես «Վարկի սպասարկման վճար»: Եթե վարկի սպասարկման վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 ամսվա կտրվածքով գանձման ենթակա վճարի չափը:
11	1) Գրավի գնահատման վճար 2) Նոտարական վավերացման վճար	Այս վճարները կարող են լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 1500 2) որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների). Օրինակ՝ 5% Միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի միջնորդավճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:
12	Գրավի ապահովագրության վճար (տարեկան)	Այս վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 1500 2) կամ որպես տոկոս. ա. վարկի մայր գումարի կամ բ. վարկի մնացորդի նկատմամբ՝ թվերի և տոկոսադրույքի սիմվոլի (%) մուտքագրման և թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող վերոնշյալ 4 տարբերակներից որևէ մեկի ընտրության միջոցով. Օրինակ՝ 5% և միաժամանակ թափվող ցուցակի համապատասխան տարբերակի ընտրություն: Ապահովագրության վճարի գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի ապահովագրության վճարի առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում: Եթե ապահովագրության վճարը գանձվում է այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա ընթացքում գանձման ենթակա վճարների հանրագումարը:

13	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ: Օրինակ՝ Անվանում [Վճար 1] Պարբերականություն [միանվագ] Գումար [1000] Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն ենթակետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք նման չափանիշների առկայության դեպքում:
14	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է. 1. տեղեկատվություն սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող չափանիշների վերաբերյալ (սահմանված է սույն ենթակետի 7-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ դաշտերում), 2. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

16. Ավանդներ

	Տվյալներ	Լրացման կանոններ
1	Ավանդի անվանումը	Մուտքագրվում է ընկերության կողմից վարկի տվյալ տեսակին տրված անվանումը: Օրինակ՝ [Ավանդ 1]
2	Ավանդի արժույթ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
3	Արժույթի փոփոխման հնարավորություն	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
4	Ավանդի գումար	Լրացվում են ավանդի գումարի առավելագույն և նվազագույն արժեքները՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած [10000] Մինչև [1000000] Ավանդի նվազագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է 0 (զրո), իսկ առավելագույն արժեք սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում:
5	Ավանդի գումարի ավելացման հնարավորություն	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
6	Ավանդի տեսակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
7	Ավանդի ժամկետ	Լրացվում են ավանդի առավելագույն և նվազագույն ժամկետները ամիսներով՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ Սկսած [12] Մինչև [120] Ավանդի նվազագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում լրացվում է «0», իսկ առավելագույն ժամկետ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտում ոչինչ չի լրացվում: Ֆիքսված ժամկետով ավանդատեսակի դեպքում նվազագույն և առավելագույն ժամկետների դաշտերում լրացվում է նույն արժեքը (օրինակ՝ երբ ավանդը ներգրավվում է 5 ամիս ժամկետով, ապա երկու դաշտերում էլ լրացվում է «5» արժեքը):
8	Տոկոսագումարների կապիտալացում	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
9	Տոկոսագումարների վճարում	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:

10	Ավանդի անվանական տոկոսադրույք	Լրացվում է ավանդի տոկոսադրույքը՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների, տոկոսադրույքի (%) կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15 Տվյալ ավանդատեսակի համար տոկոսադրույքների միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի նվազագույն արժեքը: Ընդ որում, սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կկնքվի ավելի բարձր տոկոսադրույքով՝ նման չափանիշների առկայության դեպքում *(օրինակ՝ 2000000 ՀՀ դրամ և ավելի գումարի դեպքում ավանդի տոկոսադրույքը կսահմանվի 13 տոկոս):*
11	Ավանդի սպասարկման վճար	Վճարը կարող է լրացվել. 1) որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 15000 2) կամ որպես տոկոս ավանդի գումարի նկատմամբ. Օրինակ՝ 5% Միաժամանակ ընտրվում է նաև սպասարկման վճարի կատարման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
12	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս ավանդի մայր գումարի նկատմամբ**:** Օրինակ՝ Անվանում Վճար 1 Պարբերականություն միանվագ Գումար 1000 Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:
13	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում է. 1. տեղեկատվություն սակագների՝ անվանական տոկոսադրույք և միջնորդավճարներ, վրա ազդեցություն ունեցող պայմանների վերաբերյալ (սահմանված է սույն կետի 10-րդ և 12-րդ դաշտերում), 2. տեղեկատվություն ավանդը ժամկետից շուտ հետ պահանջելու դեպքում կիրառվող սակագների վերաբերյալ (տույժեր, տուգանքներ, տոկոսագումարների հաշվարկում այլ տոկոսադրույքի հիման վրա, վաղաժամկետ հանելու արգելք և այլն), 3. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա էական ազդեցություն ունեցող այլ տվյալների/պայմանների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

17. Վճարային քարտեր

	Տվյալներ	**Լրացման կանոններ**
1	Քարտի անվանում (տեսանելի չէ սպառողների համար)	Մուտքագրվում է ընկերության կողմից վարկի տվյալ քարտատեսակին տրված անվանումը: Օրինակ՝ Քարտ+
2	Քարտի տեսակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
3	Համակարգի տեսակ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
4	Կից քարտի տրամադրում	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
5	Քարտային հաշվի արժույթ	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:

6	Օվերդրաֆտի առկայություն	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
7	Հաշվի բացման վճար	Վճարը լրացվում է որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 1500
8	Կանխիկացման հնարավորություն	Լրացվում է թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով:
9	• Քարտի սպասարկման տարեկան վճար • Կից քարտի սպասարկման տարեկան վճար	Վճարները լրացվում են որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ)՝ թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 1500 Եթե սպասարկման վճարները գանձվում են այլ պարբերականությամբ, ապա լրացվում է 1 տարվա կտրվածքով գանձման ենթակա վճարների չափը:
10	• Կանխիկացման վճար բանկի բանկոմատներում • Կանխիկացման վճար այլ բանկի բանկոմատներում • Կանխիկացման վճար արտասահմանում	Վճարները լրացվում են թվերի և տոկոսադրույքի նշանի (%) մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 1% Կանխիկացման վճարներ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտերում լրացվում է «0»:
11	• Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք • Օվերդրաֆտի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք (%) • Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք (%) • Վարկային գծի տոկոսադրույք (%)	Վճարները լրացվում են թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 3 Նման տոկոսադրույքներ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտերում լրացվում է «0»:
12	Քարտային հաշվի չնվազող մնացորդ	Լրացվում է թվերի մուտքագրման միջոցով (առանց բացատների կամ այլ սիմվոլների): Օրինակ՝ 5000 Քարտային հաշվի չնվազող մնացորդ սահմանված չլինելու դեպքում համապատասխան դաշտերում լրացվում է «0»:
13	Արտոնյալ ժամկետ (Գրեյս պերիոդ)	Լրացվում է տառերի և թվերի մուտքագրման միջոցով, թույլատրվում է նաև բացատների օգտագործումը: Օրինակ՝ 21 օր
14	Այլ միջնորդավճարներ	Տվյալ ծառայության համար այլ միջնորդավճարի առկայության դեպքում լրացվում է վերջինիս անվանումը, ընտրվում է վճարի գանձման պարբերականությունը՝ թափվող ցուցակից (drop down menu) առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ընտրելու միջոցով և մուտքագրվում է վճարի չափը՝ որպես բացարձակ գումար (ՀՀ դրամ) կամ որպես տոկոս վարկի մայր գումարի նկատմամբ: Օրինակ՝ Անվանում Վճար 1 Պարբերականություն միանվագ Գումար 1000 Այլ միջնորդավճարների գծով միջակայքի առկայության դեպքում լրացվում է տվյալ միջակայքի առավելագույն արժեքը: Ընդ որում՝ սույն կետի «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում լրացվում է տեղեկատվություն այն չափանիշների վերաբերյալ, որոնք բավարարելու դեպքում հաճախորդի հետ պայմանագիր կնքելիս կսահմանվի այլ միջնորդավճարների առավել ցածր արժեք՝ նման չափանիշների առկայության դեպքում:
15	Լրացուցիչ տեղեկություններ	Լրացվում են. 1. տեղեկատվություն սակագների՝ միջնորդավճարների վրա ազդեցություն ունեցող պայմանների վերաբերյալ (սահմանված է սույն կետի 14-րդ դաշտում), 2. տեղեկատվություն տվյալ ծառայությանն առնչվող և սպառողի ընտրության վրա ազդեցություն ունեցող տվյալների վերաբերյալ (հատուկ առաջարկներ, զեղչեր և այլն):

2011-2012 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական վանքերը և եկեղեցիները» հուշադրամների շարքից «Սուրբ Էջմիածնի Մայր տաճար», «Գնդեվանք» և «Նորավանք» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. 2012 թվականի սեպտեմբերի 15-ից շրջանառության մեջ դնել «Հայկական վանքերը և եկեղեցիները» հուշադրամների շարքից «Սուրբ Էջմիածնի Մայր տաճար», «Գնդեվանք» և «Նորավանք» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք հուշադրամների ուրվագծերի հետ մեկտեղ ներկայացված են սույն որոշման Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
9 օգոստոսի 2012 թ., N 214- Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի օգոստոսի 7-ի թիվ 214-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «Սուրբ էջմիածնի Մայր տաճար» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Հայկական վանքերը և եկեղեցիները» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Սուրբ էջմիածնի Մայր տաճար» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված է Սուրբ էջմիածնի Մայր տաճարը: Ձախ եզրագծով «2012 ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ» և աջ եզրագծով՝ «MOTHER CATHEDRAL OF HOLY ETCHMIADZIN» մակագրություններն են: Վերևի աջ և ձախ անկյուններում և ներքևի մասում պատկերված են զարդանախշեր:

Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:


Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. օգոստոսի 7-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 22.08.2012 թ. (ՀՀԳՏ N23 (436)[1], 3.09.2012):

1.1. «Սուրբ Էջմիածնի Մայր տաճար» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. «Նորավանք» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Հայկական վանքերը և եկեղեցիները» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Նորավանք» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված է Նորավանքը: Ձախ եզրագծով «2012 ՆՈՐԱՎԱՆՔ» և աջ եզրագծով՝ «NORAVANK MONASTERY» մակագրություններն են: Վերևի աջ և ձախ անկյուններում և ներքևի մասում պատկերված են զարդանախշեր:

Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

2.1. «Նորավանք» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





3. «Գնդեվանք» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Հայկական վանքերը և եկեղեցիները» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Գնդեվանք» արծաթե հուշադրամը:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հուշադրամի դարձերեսի կենտրոնում պատկերված է Գնդեվանքը: Ձախ եզրագծով «2012 ԳՆԴԵՎԱՆՔ» և աջ եզրագծով՝ «GNDEVANK MONASTERY» մակագրություններն են: Վերևի աջ և ձախ անկյուններում և ներքևի մասում պատկերված են զարդանախշեր:


Հուշադրամը, թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	25 գ
Չափը	27x47 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

3.1. «Գնդեվանք» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման մասին[*]

Ֆինանսական կազմակերպությունների կողմից պարզաբանման ակնկալիքով բարձրացվել է հարցադրում, որը վերաբերում է տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի) արդյունքում ձևավորվող կոտորակային բաժնետոմսերի՝ կազմակերպության կողմից հետգնման հնարավորությանը: Մասնավորապես՝ պարզաբանման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքներով, որ բանկերի կողմից իրենց բաժնետոմսերի հետգնում, ինչպես նաև բանկերի և ապահովագրական ընկերությունների կողմից կանոնադրական կապիտալի նվազեցում չի թույլատրվում, իսկ բաժնետոմսերի կոնսոլիդացիայի արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերը ենթակա են պարտադիր հետգնման:

Բարձրացված խնդրի տեսանկյունից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալին.

Բաժնետոմսերի կոնսոլիդացիան բաժնետիրական ընկերություններին հատուկ և անհրաժեշտ կորպորատիվ գործողություն է: Այն հանդիսանում է բաժնետիրական ընկերությունների առանձնահատկությունը: Մասնավորապես, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Ընկերությունն իրավունք ունի ժողովի որոշմամբ համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը:

Միևնույն օրենքը սահմանում է նաև, որ համախմբման (կոնսոլիդացիայի) հետևանքով կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում վերջիններս ենթակա են հետգնման Ընկերության կողմից:

Բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնումը հանդիսանում է կոնսոլիդացիայի միջոցով ընկերության գործունեության արդյունավետության բարձրացման միջազգայնորեն ընդունված մեխանիզմ: Բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնումը ժամանակակից շուկայական տնտեսություններով երկրներում լայնորեն կիրառվող մեխանիզմ է, որի նպատակն է ապահովել տնտեսվարող սուբյեկտների կառավարման արդյունավետությունը: Ավելին, կարևոր է այն հանգամանքը, որ բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնումը նպատակ չի հետապնդում նվազեցնել ընկերության կապիտալը, չնայած կարող է հանգեցնել նման իրադրության:

Բաժնետոմսերի կոնսոլիդացիայի՝ որպես կորպորատիվ գործողության իրավունքը հավասարապես կիրառելի է բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերի և ապահովագրական ընկերությունների նկատմամբ:

Նման եզրահանգումը հիմնավորված է հետևյալ հանգամանքներով.

1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բանկերի վրա տարածվում են բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ օրենքները և այլ իրավական ակտերը, եթե «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքն այլ կանոններ չի սահմանում, իսկ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը բանկի կողմից իր բաժնետոմսերի կոնսոլիդացիայի իրավունքը սահմանափակող որևէ դրույթ չի պարունակում,
2. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապահովագրական ընկերությունների նկատմամբ կիրառվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Ավելին, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ բանկի կողմից իր բաժնետոմսերի ձեռքբերման սահմանափակումների և բանկի բաժնետոմսերի հետգնման նպատակով Կենտրոնական բանկի խորհրդի կողմից համաձայնության տրամադրման մերժման հիմքերի, ինչպես նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հուլիսի 24-ին (ՀՀՊՏ N21(434), 15.08.2012):

օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված ապահովագրական ընկերության կողմից համալրված կանոնադրական կապիտալի նվազեցման սահմանափակումների և կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Կենտրոնական բանկի խորհրդի կողմից համաձայնության տրամադրման մերժման հիմքերի վերլուծությունից ակնհայտ է, որ Կենտրոնական բանկի, որպես ֆինանսական համակարգի միասնական վերահսկողության գործառույթով օժտված մարմնի համար, բանկի կամ ապահովագրական ընկերության բաժնետոմսերի հետգնման հետ կապված առաջնային ռիսկ է հանդիսանում բանկից կամ ապահովագրական ընկերությունից կապիտալի արտահոսքի ռիսկը, որի արդյունքում կարող են վտանգվել ինչպես տվյալ բանկի կամ ապահովագրական ընկերության հաճախորդների շահերը, բանկի կամ ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակը, այնպես էլ բանկային, ապահովագրական և ֆինանսական համակարգերի կայունությունը:

Հետևաբար կարելի է միանշանակ պնդել, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքներում ամրագրված կարգավորման մեխանիզմներն ուղղված չեն բանկերի կամ ապահովագրական ընկերությունների համար բաժնետոմսերի կոնսոլիդացիան որպես կորպորատիվ գործողության արգելելուն, այլ պարզապես սահմանում են կանոններ բոլոր այն գործողությունների համար, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել բանկի կամ ապահովագրական ընկերության կապիտալի նվազեցման:

Նման յուրահատուկ կարգավորումը պայմանավորված է բանկային և ապահովագրական համակարգերի կանոնակարգման առանձնահատկություններով: Տվյալ դեպքում Կենտրոնական բանկն ունի երկակի դեր՝ բանկի և ապահովագրական ընկերության նկատմամբ պրուդենցիալ վերահսկողության իրականացում և բանկի և ապահովագրական ընկերության բոլոր բաժնետերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն: Կենտրոնական բանկի տեսանկյունից բանկի կամ ապահովագրական ընկերության բաժնետոմսերի կոնսոլիդացիան կարող է խնդրահարույց լինել, եթե այն ուղղված է բանկի կամ ապահովագրական ընկերության կապիտալի նվազեցմանը կամ վերջիններիս բաժնետերերի իրավունքների ոտնահարմանը:

Արժեթղթերի համախմբման առնչությամբ հարկ է հիշատակել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) 2010 թվականի հուլիսի 13-ի N ՍԴՈ-903 որոշումը, որում նշվում է, որ կոտորակային բաժնետոմսերի առկայությունը նպատակահարմար չէ ինչպես արժեթղթերի շուկայի արդյունավետ գործունեության ապահովման նկատառումներից ելնելով, այնպես էլ բաժնետիրական ընկերության արդյունավետ կառավարման տեսանկյունից: Արժեթղթերի կոնսոլիդացիան Սահմանադրական դատարանի կողմից դիտարկվում է որպես տնտեսապես արդարացված գործընթաց, որը կազմում է բաժնետիրական ընկերության՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտի, տնտեսական ազատության դրսևորումներից մեկը: Միևնույն ժամանակ նշվում է, որ համաձայն միջազգային փորձի ուսումնասիրության՝ գործնականում որպես կոտորակային բաժնետոմսերի գոյությունը բացառելու միջոց ընդունված է կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնման ինստիտուտը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը նշված դրույթների, ինչպես նաև միջազգային փորձի[1] ուսումնասիրության արդյունքում գտնում է, որ.

- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորման արդյունքում բաժնետոմսերի կոնսոլիդացիայի հետևանքով առաջացած կոտորակային բաժնետոմսերը հետգնելու Ընկերության պարտականությունը համահունչ է զարգացած երկրներում արժեթղթերի կոնսոլիդացիայի բնագավառում որդեգրված քաղաքականությանը և հավասարապես կիրառելի է բանկային և ապահովագրական համակարգերի նկատմամբ:

---

[1] ԱՄՆ Դելավեր նահանգի Ընկերությունների մասին օրենքի (այսուհետ՝ DGCL) 8-րդ Գլխի 1-ին Բաժնի (որը կարգավորում է բոլոր ընկերությունների ձևավորման և գործունեության կարգը) § 151-ը նախատեսում է, որ ընկերության ցանկացած բաժնետոմս կարող է հետ գնվել ընկերության կամ բաժնետերերի ընտրությամբ կամ որոշակի դեպք վրա հասնելուն պես: Միևնույն Բաժնի § 160-ը սահմանում է, որ ցանկացած ընկերություն կարող է գնել, հետգնել, ստանալ, վերցնել կամ այլ կերպ ծեռք բերել, տիրապետել կամ պահել իր սեփական բաժնետոմսերը, ընդ որում՝ նման գնումը կամ հետգնումը թույլատրվում է եթե այն չի հանգեցնում ընկերության կապիտալի նվազեցմանը, և իրականացվում է հետգնման գինը չգերազանցող գնով և § 151-ի պահանջներին համապատասխան: Միևնույն Բաժնի § 155-ը սահմանում է, որ Ընկերությունն իրավասու է, սակայն պարտավոր չէ թողարկել կոտորակային բաժնետոմսեր: Կոտորակային բաժնետոմսերի չթողարկման որոշում կայացնելու դեպքում Ընկերությունը պարտավոր է կազմակերպել այդ կոտորակային իրավունքների (fractional interests) կանխիկով հետգնումը՝ արդար գնով կամ դրանց փոխարեն թողարկել ամբողջական բաժնետոմս ստանալու իրավունքը հավաստող վարանտներ: DGCL 5-րդ Գլխի 7-րդ Բաժինը, որը սահմանում է նահանգային բանկերի նկատմամբ կիրառվող ընկերությունների իրավունքը, բանկերի կողմից բաժնետոմսերի կոնսոլիդացիայի և կոտորակային բաժնետոմսերի հետգնման առանձնահատուկ նորմեր չի սահմանում:

ԱՄՆ Ֆեդերալ բանկերի գործունեությունը կանոնակարգող Ազգային բանկերի մասին օրենքը չի պարունակում բաժնետոմսերի հետգնման սահմանափակումներ, բայց միևնույն ժամանակ սահմանում է, որ բանկի կապիտալի նվազեցում կարող է իրականացվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում՝ վերահսկող մարմնի (Comptroller of the Currency) համաձայնությամբ:

- «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը չի սահմանում բաժնետոմսերի համախմբման, ինչպես նաև դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ առանձնահատուկ իրավական նորմեր: Վերլուծելով բանկի բաժնետոմսերի հետգնմանը Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության տրամադրման և մասնավորապես համաձայնության մերժման հիմքերը՝ ակնհայտ է, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկի բաժնետոմսերի հետգնման վերաբերյալ իրավական նորմերը կիրառելի են բանկի կապիտալի նվազեցման նպատակ հետապնդող բանկի բաժնետոմսերի հետգնման հարաբերությունների նկատմամբ:
- «Ապահովագրության և ապահովագրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ապահովագրական ընկերությունների նկատմամբ կիրառվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները, որոնք նախատեսում են կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնման ինստիտուտ:
- Ելնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ֆինանսական, այդ թվում՝ բանկային համակարգի կայունության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու Կենտրոնական բանկի խնդիրների իրականացման անհրաժեշտությունից՝ Կենտրոնական բանկի խորհուրդը կենսական է համարում բանկի կամ ապահովագրական ընկերության կողմից իր բաժնետոմսերի հետգնման դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից համաձայնության տրամադրման մեխանիզմի նույնական կիրառումը նաև կոնսոլիդացիայի որոշման կայացման և դրա արդյունքում առաջացած կոտորակային բաժնետոմսերի հետգնման դեպքերում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **պաշտոնապես պարզաբանում է.**

1. Բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերը և ապահովագրական ընկերությունները որպես կորպորատիվ գործողություն իրավասու են իրականացնել իրենց բաժնետոմսերի կոնսոլիդացիա և կոնսոլիդացիայի արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետգնում՝ այդ գործողությունների իրականացման համար ստանալով Կենտրոնական բանկի վերահսկողական դրական դիրքորոշումը:
2. Կոնսոլիդացիայի ու դրա արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերի հետգնման, ինչպես նաև ֆինանսական կայունության և (կամ) բաժնետերերի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ կորպորատիվ այլ գործողությունների կիրառման վերաբերյալ իր դիրքորոշումը Կենտրոնական բանկը տրամադրում է հիմնվելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատուկ փաստերի վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
1 օգոստոսի 2012 թ., N 8

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՕԳՈՍՏՈՍ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 4-ի նիստի «2012 թվականի սեպտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների,ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի սեպտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 39
Իրական հատվածի ցուցանիշներ 42
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 45
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ վճարային հաշվեկշիռ (վերլուծական ներկայացում)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրք
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների և պարտավորությունների արժութային կազմը
ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ և 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 70
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 71
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 81
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 101
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 114
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 116
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 122
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (04.09.2012)

2012 թվականի սեպտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի սեպտեմբերի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Վ. Աբրահամյանը, Օ. Աղասյանը, Ա. Դարբինյանը

Խորհրդի նիստը սկսվեց օգոստոսի վերջի դրությամբ իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները:

2012 թվականի օգոստոսին արձանագրվել է 0.4% գնանկում, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը կազմել է 2.5%՝ նախորդ ամսվա ցուցանիշի համեմատությամբ աճելով 0.2 տոկոսային կետով և համընկնելով տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանին: Օգոստոսին ևս ամսական գնանկումը, ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների գների գրեթե անփոփոխ մակարդակների պարագայում, պայմանավորվել է բացառապես պարենային ապրանքների գների անկմամբ (նպաստումը գնանկմանը՝ 0.4 տոկոսային կետ), որի կառուցվածքում էլ զգալի նվազում է դիտվել «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գներում՝ 9.2% (նպաստումը գնանկմանը՝ 0.6 տոկոսային կետ):

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2012 թվականի հունվար-հուլիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.7%: Անցած 7 ամիսների արդյունքներով տնտեսական ակտիվության աճը գերազանցել է ակնկալիքները՝ պայմանավորված արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի թողարկման ծավալների համապատասխանաբար 13.4% և 10.2% աճով. ծառայությունների ոլորտի թողարկման ծավալների աճը ակնկալվածի շրջանակում էր (5.5%): Շինարարության ճյուղում պահպանվել է անկման միտումը՝ 5.2%:

